

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային  
հանձնաժողովի  
Նիստի

Մասնակցում էին նիստի անդամները, շահառու հաշմանդամներ ունեցող  
հասարակական կազմակերպությունները:

**Օրակարգում՝**

1. Մարզում ներառական կրթության ուղղությամբ իրականացված  
աշխատանքների ընթացքը

/Զեկուցող՝ Գ.Սայադյան/

Բացելով նիստը հանձնաժողովի նախագահ տիկին Մուրադյանը  
շնորհակալություն հայտնեց հասարակական կազմակերպություններին  
"Երեխաների պաշտպանության օրվա" կապակցությամբ հաշմանդամ  
երեխաների համար կազմակերպված ակտիվ միջոցառումների  
կապակցությամբ:

Օրակարգի հարցի հետ կապված տիկին Մուրադյանն առաջարկեց լսել  
տիկին Սայադյանին՝ մարզում ներառական կրթության ուղղությամբ  
շարունակվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Նա ասաց, որ  
ուսումնական տարվա ավարտին պլանավորված թվով 4/չորս/ դպրոցներում  
իրականացվել է ներառական կրթություն, ընդամենը 155 աշակերտով:

2015-16թթ. ուսումնական տարում նախատեսվում է Մեծամորի թիվ 1,  
Վաղարշապատի թիվ 4 և 11, Արմավիրի թիվ 8, Սարդարապատի,  
Մյասնիկյանի, Գետաշենի, Թաիրովի, Մրգաշատի թիվ 2, Հայկավանի,  
Բաղրամյանի/Էջմ./, Նալբանդյանի, Արշալույսի և Դալարիկի միջնակարգ  
դպրոցներում բացել ներառական դասարաններ, 1-4 դասարաններում՝ 344, 5-  
9 դասարաններում՝ 269 և 9-11 դասարաններում՝ 17 աշակերտով:

Ամփոփելով նիստը տիկին Մուրադյանը նշեց, որ դպրոցների ներառական  
խմբերի թիվը նկատելի ավելացել է և քաղքաշինության վարչության պետ  
Կ.Դանիելյանին առաջարկեց հսկողություն իրականացնել նոր կառուցվող  
կրթական օբյեկտներում մասնավորապես և հասարակական օբյեկտներում  
ընդհանրապես քաղաքաշինական նորմատիվների /ստանդարտների  
պահպանման նկատմամբ: Իսկ այն դպրոցներում, որտեղ առկա են ներառական  
խմբեր, միջոցներ ձեռնարկել դասասենյակների սանհանգույցների, դռների,  
ինչպես նաև թեքահարթակների կառուցապատում իրականացնելու:  
Ֆինանսական վարչությանը հանձնարարեց համատեղ հսկողության տակ  
պահել դասասենյակների անհարժեշտ գույքի և այլ պարագաների  
համալրման խնդիրը՝ նոր ուսումնական տարին հաջող սկսելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝



L. Մուրադյան

Արձանագրող՝ Ծ.Գրիգորյան